# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ԲԴԽ-39-Ո-130**
**2023թ.**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասերը և 89-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

1. Հաստատել Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և 2024 թվականի բյուջետային հայտը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:
2. Հանձնարարել Դատական Դեպարտամենտին՝ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և 2024 թվականի բյուջետային հայտը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ** **Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**2023թ. ապրիլի 3**
**ք. Երևան**